Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 22-03-2021 թ. որոշմամբ
««ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂ. 1
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1031411
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2018-08-07
1.5 ՀՎՀՀ-ն		02680994
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)55408608
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		meruzhbadalyan@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Մերուժան Բադալյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը		
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Լուսագյուղ գյուղի զարգացում	140,406,400
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

Digitally signed by MARTIROSYAN TIGRAN 2010740092
Date: 2022.08.08 14:16:53 AMT

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Փայտե տնակներ	21,027,500
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Լուսագյուղ գյուղի զարգացում	164,402,109	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	164,402,109	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	164,402,109	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 27 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԱՐՄԵՆԻԱՆ ՖՅՈՒՉՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

«Արմենիան Ֆյուչր» Բարեգործական Հիմնադրամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արմենիան Ֆյուչր» Բարեգործական Հիմնադրամի

Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմենիան Ֆյուչր» Բարեգործական Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի»* (Մասնագիտական էթիկայի կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող մասնակգիտական էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ

ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ
տնօրեն Հայկ Մարգարյան

Աուդիտի ղեկավար
Լիլիթ Կատոյան

21 հունիսի 2021թ
ք. Երևան

Հազար դրամ	Ծնթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	17,537	14,143
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**17,537**	**14,143**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	97,132	68,838
Տրված կանխավճարներ		32	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	59,289	78,318
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**156,453**	**147,156**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**173,990**	**161,299**
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		154,758	132,167
Ընդամենը զուտ ակտիվներ		**154,758**	**132,167**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	17,537	14,143
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**17,537**	**14,143**
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական և այլ պարտավորություններ	8	1,695	14,989
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**1,695**	**14,989**
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**173,990**	**161,299**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 21-ին:

Գործադիր տնօրենի ժ/պ
Մերուժան Բաղալյան

Գլխավոր հաշվապահ
Տիգրան Մարտիրոսյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար դրամ	Ծնթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նվիրաբերությունից եկամուտներ	9	157,389	137,246
Շնորհներից եկամուտներ	7	651	428
Գործառնական ծախսեր	10	(140,416)	(104,105)
Գործառնական շահույթ		**17,624**	**33,569**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ / (վնաս)	11	4,967	(745)
Շահույթ մինչև հարկումը		**22,591**	**32,824**
Տարվա շահույթ		**22,591**	**32,824**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**22,591**	**32,824**

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Արմենիան Ֆյուչր» Բարեգործական Հիմնադրամ
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**99,343**	**99,343**
Տարվա շահույթ	32,824	32,824
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	32,824	32,824
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**132,167**	**132,167**
Տարվա շահույթ	22,591	22,591
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	22,591	22,591
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**154,758**	**154,758**

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Արմենիան Ֆյուչր» Բարեգործական Հիմնադրամ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված շնորհներ	4,045	14,571
Ստացված նվիրաբերություններ	136,361	136,311
Վճարումներ մատակարարներին	(115,341)	(121,255)
Տրված նվիրատվություններ	(35,318)	(25,776)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(8,636)	(8,442)
Վճարումներ բյուջե	(65)	(840)
Այլ գործառնական ելքեր	(997)	(737)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(19,951)**	**(6,168)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(4,045)	(14,071)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(4,045)**	**(14,071)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
-	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**-**	**-**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք	**(23,996)**	**(20,239)**
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	78,318	99,302
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	4,967	(745)
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**59,289**	**78,318**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Արմենիան Ֆյուչր» Բարեգործական Հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Արմենիան Ֆյուչր» Բարեգործական Հիմնադրամը (Հիմնադրամ) ստեղծվել է 2018թ. հուլիսի 27-ին: Հիմնադրամի գործող կանոնադրությունը գրանցվել է 2018թ. օգոստոսի 7-ին ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից (գրանցման համար՝ 222.160.1031411): Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են.

- Հոգաբարձուների խորհուրդը (Խորհուրդ),
- Հիմնադրամի գործադիր տնօրենը:

Հիմնադրամի նպատակներն են՝

- քաղաքային, գյուղական համայնքների և Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև այլ պետությունների սոցիալ-տնտեսական, մշակութային, գիտակրթական, առողջապահական, անվտանգության զարգացման հիմնախնդիրների լուծմանը և դրան ուղղված պետական, միջազգային և այլ ծրագրերին ու միջոցառումներին աջակցություն.
- մշակույթի պահպանման տարածման ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը և մշակույթի գործիչների սոցիալական պաշտպանության իրականացում.
- նպաստել գյուղական և քաղաքային համայնքների համար կարևոր նշանակություն ունեցող հուշարձանների վերականգնմանը, վերանորոգմանը կամ տեղադրմանը.
- նպաստել գյուղական և քաղաքային համայնքներում տնտեսության զարգացման, համայնքային և պետական նշանակության ենթակառուցվածքների ստեղծման, ինչպես նաև ցանկացած այլ տեսակի գործունեության իրականացմանը, որ խթան կհանդիսանա գյուղական և քաղաքային համայնքների զարգացմանը.
- Աջակցել ՀՀ-ում առողջապահության, տրանսպորտի, մշակույթի, կապի, տեղեկատվական տեխնոլոգիաների, էներգետիկայի, բնապահպանության, արդարադատության, մտավոր սեփականության, իրավական դաշի, արդյունաբերության, գյուղատնտեսության, ինչպես նաև անվտանգության խնդիրների լուծմանը:

2020 թվականի ընթացքում Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 1 աշխատակից (2019թ.՝ 1 աշխատակից):

2. Պատրաստման հիմունքներ

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար Հիմնադրամի կողմից ընդունված չափման հիմունք է հանդիսանում սկզբնական արժեքը, որը սովորաբար համակցվում է այլ չափման հիմունքների հետ: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Հիմնադրամը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում, և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.5 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

2.6 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2020թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ». Ձեռնարկատիրական գործունեության սահմանումը

ՖՀՄՍ 3-ում կատարվել է ձեռնարկատիրական գործունեության սահմանման խմբագրում, համաձայն որի նախ պարզաբանվել է, որ ձեռնարկատիրական գործունեությունը պետք է անպայման ունենա մուտքեր (մուտքային գործոններ), գործընթաց, որը պետք է լինի նշանակալի, և մուտքերն ու գործընթացը միասին պետք է ապահովեն արդյունք: Նաև պարզաբանվել է, որ ձեռնարկատիրական գործունեության արդյունքը արտահայտվում է հաճախորդներին ծառայություն կամ ապրանք մատակարարելով, կամ սովորական գործունեությունից այլ եկամուտների տեսքով:

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» և ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ». Էականության սահմանումը

ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ 8-ում տեղի է ունեցել էականության սահմանման խմբագրում, ըստ որի տեղեկատվությունը համարվում է էական, եթե կա ողջամիտ ակնկալիք, որ դրա բացթողումը, ոչ ճիշտ ներկայացումը կամ միավորման արդյունքում աննկատ ներկայացումը կազդի հաշվետվությունների հիմնական օգտագործողների կողմից կայացվող որոշումների վրա:

Ֆինանսական հաշվետվությունների վերանայված Հայեցակարգային Հիմունքներ

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը թողարկել է վերանայված Հայեցակարգային Հիմունքները, որն օգտագործվելու է ստանդարտներ սահմանելիս որոշումների կայացման գործում: Հիմնական փոփոխությունները հետևյալի վերաբերյալ են.

- ֆինանսական հաշվետվությունների նպատակի սահմանում
- օգտակար ֆինանսական տեղեկատվության որակական բնութագրեր
- հաշվետու կազմակերպության սահմանում
- ակտիվի, պարտավորության, սեփական կապիտալի, եկամտի և ծախսերի սահմանումներ
- ֆինանսական հաշվետվություններում ակտիվների և պարտավորությունների ճանաչման չափանիշների և դրանց ապաճանաչման ուղեցույցի ավելացում
- ուղեցույցի ավելացում տարբեր չափման հիմունքների համար, և
- սահմանում, որ շահույթը կամ վնասը կատարողականի հիմնական ցուցանիշն է, և որ, սկզբունքորեն, այլ համապարփակ արդյունքի եկամուտներն ու ծախսերը պետք է վերադասակարգվեն, երբ դա նպաստում է ֆինանսական հաշվետվությունների տեղին կամ արժանահավատ ներկայացմանը:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ առկա ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Պարտավորությունների դասակարգում ընթացիկի և ոչ ընթացիկի – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ստանդարտի փոփոխությունները հստակեցնում են, որ պարտավորությունները դասակարգվում են ընթացիկի և ոչ ընթացիկի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գոյություն ունեցող իրավունքներով պայմանավորված: Դասակարգման վրա չեն ազդում Հիմնադրամի ակնկալիքները կամ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերը (օրինակ՝ պայմանների խախտումը):

Փոփոխությունները նաև հստակեցնում են ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ստանդարտի «պարտավորության մարում» արտահայտության նշանակությունը: Փոփոխությունները կարող են ազդել պարտավորությունների դասակարգման վրա՝ հատկապես այն կազմակերպությունների համար, որոնք նախկինում դասակարգումը որոշելու համար հաշվի են առել ղեկավարության մտադրությունները և որոշ պարտավորությունների վրա, որոնք կարող են փոխարկվել կապիտալի: Վերոնշյալների վրա փոփոխությունների ազդեցությունը պետք է կիրառվի հետընթաց՝ համաձայն ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ստանդարտի պահանջների:

Հիմնական միջոցներ՝ մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործումը - Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում

ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի փոփոխություններով արգելվում է կազմակերպություններին հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքից կատարել նվազեցումներ՝ հիմնական միջոցի միավորի վաճառքից առաջացող ցանկացած մուտքերից՝ ակտիվը նախանշած նպատակով օգտագործելու համար պատրաստելու ժամանակահատվածի ընթացքում: Փոփոխությունները նաև հստակեցնում են, որ կազմակերպությունը պետք է թեստավորի՝ արդյոք ակտիվը գտնվում է պատշաճ վիճակում, երբ գնահատում է տվյալ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական վիճակը: Ակտիվի ֆինանսական ցուցանիշները տեղին չեն նման գնահատման համար: Կազմակերպությունները պետք է առանձին բացահայտեն այն ակտիվներից մուտքերի գումարները և ինքնարժեքները, որոնք չեն ստացվել կազմակերպության սովորական գործունեության արդյունքում:

Հղումներ Հայեցակարգային Հիմունքներին - Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում

Որոշ փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտում՝ թարմացնելով հղումները ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային Հիմունքներին և ավելացվել է բացառություն ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» և ՖՀՄՍՄԿ 21 «Պարտադիր վճարներ» մեկնաբանության շրջանակներում պարտավորությունների և պայմանական պարտավորությունների ճանաչման համար: Փոփոխությունները նաև հաստատում են, որ պայմանական ակտիվները չպետք է ճանաչվեն ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Տարեկան բարեփոխումներ՝ 2015-2017թթ.

2015-2017թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՍ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ, որտեղ Հիմնադրամին վերաբերող փոփոխություններ չկան:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

3.1 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներից հողամասերը, շենք-շինությունները, մեքենաներ և սարքավորումները, տրանսպորտային միջոցները, արտադրական-տնտեսական գույքը հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են երկարաժամկետ վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենք-շինություններ	- 20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	- 1 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 8 տարի
Արտադրական, տնտեսական գույք	- 5 տարի

3.2 Վարձակալություն

Հիմնադրամը որպես վարձակալ վարձակալության պայմանագրի սկզբնական ճանաչման պահին ճանաչում է ակտիվի օգտագործման իրավունք և վարձակալական պարտավորություն, բացառությամբ ցածրարժեք և կարճաժամկետ վարձակալությունների՝ ՖՀՄՍ 16-ով նախատեսված բացառությունների:

Սկզբնական ճանաչումը

Սկզբնական ճանաչման ամսաթվին Հիմնադրամը չափում է ակտիվի օգտագործման իրավունքը սկզբնական արժեքով, որը ներառում է հետևյալ տարրերը.

- վարձակալական պարտավորության սկզբնական ճանաչման արժեքը,
- ճանաչման ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձակալական վճարները, հանած վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանների ազդեցությունը,
- կրած սկզբնական ուղղակի ծախսումները,
- վարձակալած ակտիվի ազատման, վերականգման կամ ապամոնտաժման ծախսերի գնահատականը:

Սկզբնական ճանաչման ամսաթվին Հիմնադրամը չափում է վարձակալական պարտավորությունը՝ որպես այդ ամսաթվի դրությամբ վճարման ենթակա վարձակալական վճարների ներկա արժեք: Վարձակալական վճարները զեղչվում են վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, եթե այն հնարավոր է որոշել: Հակառակ դեպքում Հիմնադրամը զեղչման համար օգտագործում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալը չափում է ակտիվի օգտագործման իրավունքը սկզբնական արժեքով՝

- հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը

- ճշգրտված վարձակալական պարտավորության վերաչափումով:

Ակտիվի օգտագործման իրավունքի մաշվածության հաշվարկի համար հիմք է հանդիսանում հիմնական միջոցների մաշվածության Հիմնադրամի քաղաքականությունը: Սկզբնական ճանաչումից հետո Հիմնադրամը վերաչափում է վարձակալական պարտավորությունը՝

- մեծացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալական պարտավորության նկատմամբ հաշվեգրվող տոկոսը

- փոքրացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վճարած վարձակալական վճարները

- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության պայմանագրի վերաչափումները կամ փոփոխությունները

3.3 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական

միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.4 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Հիմնադրամը չունի որպես այլ համապարփակ արդյունքում իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 13-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Հիմնադրամը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով: Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Հիմնադրամը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ն առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Հիմնադրամի պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Հիմնադրամը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Հիմնադրամը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է, որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հիմնադրամը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը օգտվելով պարզեցված մոտեցումից և կորուստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Հիմնադրամը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Քանի որ ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական պարտավորությունների հաշվառումը հիմնականում մնում է այնպիսին, ինչպիսին էր ՀՀՄՍ 39-ի պահանջներով, ՖՀՄՍ 9-ի կիրառումը ազդեցություն չի ունեցել Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների վրա: Այնուամենայնիվ, ամբողջականության համար, ստորև ներկայացված է համապատասխան քաղաքականությունը:

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը և ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 13-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է հոգեբարձուներից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.5 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.70 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 537.26 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

3.6 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական արդյունքի, ոչ էլ՝ հարկվող արդյունքի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Հիմնադրամը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող արդյունքի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները: Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Հիմնադրամը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.7 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.8 Աշխատակիցների հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվառման ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցել է ծառայություն, Հիմնադրամը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, ՀՀՄՍ 2 «Պաշարներ» և ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտները):

Հիմնադրամը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ. և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

3.9 Շնորհներ և նվիրաբերություններ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհներ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները (ծրագրային, վարչական և այլն), որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Հիմնադրամին տրված նվիրաբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում որպես եկամուտ այն տարում, երբ դրանք փաստացի ստացվել են:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հողամասեր	Շենք - շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ավելացում	7,633	6,626	162	-	150	**14,571**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,633**	**6,626**	**162**	**-**	**150**	**14,571**
Ավելացում	-	-	-	4,045	-	**4,045**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,633**	**6,626**	**162**	**4,045**	**150**	**18,616**
Կուտակված մաշվածություն						
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Տարվա ծախս	-	268	136	-	24	**428**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**268**	**136**	**-**	**24**	**428**
Տարվա ծախս	-	331	26	264	30	**651**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**599**	**162**	**264**	**54**	**1,079**
Հաշվեկշռային արժեք						
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,633**	**6,358**	**26**	**-**	**126**	**14,143**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,633**	**6,027**	**-**	**3,781**	**96**	**17,537**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամում առկա են 162 հազար ՀՀ դրամ զրո հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ (2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ զրո):

5 Պաշարներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապրանքներ	29,090	796
Անավարտ արտադրություն	68,042	68,042
Ընդամենը	**97,132**	**68,838**

Պաշարների կազմում ներառված անավարտ արտադրության մնացորդը՝ 68,042 հազար ՀՀ դրամի չափով, իրենից ներկայացնում է «Լուսագյուղ գյուղի զարգացում» բարեգործական ծրագրի շրջանակներում Լուսագյուղ համայնքում կառուցվող մանկապարտեզի և դպրոցի շենքերի գծով նախագծային աշխատանքների արժեքները: 2020թ.-ի ընթացքում այս ուղղությամբ աշխատանքներ չեն կատարվել:

6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ հաշիվներ բանկում	59,289	78,318
Ընդամենը	**59,289**	**78,318**

7 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներին վերաբերող շնորհներ		
Տարեսկզբի մնացորդ	**14,143**	**-**
Տարվա ընթացքում ստացված	4,045	14,571
Ֆինանսական արդյունքներում արտացոլված	(651)	(428)
Տարեվերջի մնացորդ	**17,537**	**14,143**

8 Կրեդիտորական և այլ պարտավորություններ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	100	13,844
Պարտավորություններ պետական բյուջեին	-	220
Չօգտագործված արձակուրդայինի գծով պահուստ	1,595	925
Ընդամենը	**1,695**	**14,989**

9 Նվիրաբերությունից եկամուտներ

Նվիրաբերությունից եկամուտներն 2020 թվականի ընթացքում կազմել են 157,389 հազար ՀՀ դրամ (2019 թվականի ընթացքում՝ 137,246 հազար ՀՀ դրամ), որոնք իրենցից ներկայացնում են Հիմնադրամի ընթացիկ գործունեության և կանոնադրական նպատակների իրականացման համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված միջոցները:

10 Գործառնական ծախսեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի դիմաց վարձատրություն	9,103	9,103
Ուսումնասիրությունների և զարգացման ծախսեր	2,700	3,942
Հիմնական միջոցների մաշվածություն	651	428
Գեոդեզիական և չափագրման ծախսեր	-	1,250
Շինարարական ծրագրային ծախսեր	11,300	23,045
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	4,090	2,940
Պահպանման ծախսեր	26,100	21,511
Տրանսպորտային ծախսեր	607	932
Նվիրատվություններ և նվիրաբերություններ	84,285	38,439
Չփոխհատուցվող հարկեր	50	37
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	996	677
Այլ	534	1,801
Ընդամենը	**140,416**	**104,105**

11 Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ / (վնաս)

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխարժեքային տարբերություններից օգուտ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10,900	3,867
	10,900	**3,867**
Փոխարժեքային տարբերություններից վնաս		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(5,933)	(4,612)
	(5,933)	**(4,612)**
Փոխարժեքային տ արբերություններից զուտ օգուտ / (վնաս)	**4,967**	**(745)**

12 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի: Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին:

13 Ֆինանսական գործիքներ

13.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.4-ում:

13□2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	59,289	78,318
Ընդամենը	**59,289**	**78,318**

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Կրեդիտորական և այլ պարտավորություններ	100	14,064
Ընդամենը	**100**	**14,064**

14 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:
Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

- ✓ ***Արտարժութային ռիսկ***

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով:

Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի՝ դրամական միջոցներից, որոնք ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, ներկայացված են ստորև.

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Հազար ՀՀ դրամ	Եվրո	Հազար ՀՀ դրամ
Ֆինանսական ակտիվներ				
Մնացորդներ բանկերում	101,500	53,043	3,860	2,475
	101,500	**53,043**	**3,860**	**2,475**

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Հազար ՀՀ դրամ	Եվրո	Հազար ՀՀ դրամ
Ֆինանսական ակտիվներ				
Մնացորդներ բանկերում	20,000	9,594	125,000	67,158
	20,000	**9,594**	**125,000**	**67,158**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2019թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2019թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2019թ.՝ 10%):

Դրամի արժեզրումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2019թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
Համապարփակ ֆինանսական արդյունք	5,304	959	248	6,716

✓ ***Պարտքային ռիսկ***

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է միջոցները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Հիմնադրամի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար Հիմնադրամը գրավ չի վերցնում: Բացի այդ Հիմնադրամը գրավ չի պահանջում նաև այլ ֆինանսական ակտիվների համար:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Մնացորդներ բանկերում	59,289	78,318
Ընդամենը	**59,289**	**78,318**

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները: Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

15 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

16 Պայմանականություններ

16.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը: Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Հիմնադրամի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա: Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Հիմնադրամի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

16.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

16.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել: Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

16.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Հիմնադրամը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

17 Կապակցված կողմեր

Հսկողություն

Ներկայացվող հաշվետվությունների առումով Հիմնադրամի կապակցված կողմերն են՝ նրա հիմնադիրները, հոգաբարձուների խորհրդի անդամները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք:

Հիմնադրամի Խորհրդի անդամներ են հանդիսանում Գոռ Բաղալյանը, Վարդան Տողանյանը և Ալբերտ Ավդոլյանը: Հիմնադրամն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ:

Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

ա) Հսկողություն իրականացնող անձանց հետ կատարված գործարքների մանրամասներ.

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը առ 31.12.2020	2020թ.		Մնացորդը առ 31.12.2019
Նվիրաբերություններ	-	(136,361)	136,361	-
Շնորհներ	17,537	(651)	4,045	14,143

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը առ 31.12.2019	2019թ.		Մնացորդը առ 31.12.2018
Նվիրաբերություններ	-	(136,312)	136,312	-
Շնորհներ	14,143	(427)	14,570	14,143

բ) Ղեկավարության հետ կատարված գործարքների մանրամասներ.

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը առ 31.12.2020	2020թ.		Մնացորդը առ 31.12.2019
Աշխատանքի վճարմանն ուղղված միջոցներ	-	(8,433)	8,433	-

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը առ 31.12.2019	2019թ.		Մնացորդը առ 31.12.2018
Աշխատանքի վճարմանն ուղղված միջոցներ	-	(8,433)	8,433	-

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 13.07.2022 12:47